

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳԻՏՈՒԹԻՒՆՔ, ԴՊՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐՈՒԵՍՔ ԵՒ ՕՐԱԼՈՒՐՔ

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ

ՏՆՕՐԷՆ

ԵՐՈՒԱՆԴ ՏԷՐ-ԱՆԴՐԷԱՍԵԱՆ



ԲԻԻՋՆԴ Մ. ՊՈԶԱՃԵԱՆ

Գ. ՇԲԶԱՆ

1900 ՅՈՒՆՈՒԱՐ 15

ԹԻՒ 78

„هازره گيداق“ عزه نسي

HANRAKIDAGUE

JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIQUE

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տարեկան Պոլսոյ համար

30 ԴՐՁ.

Գաւառաց համար

60 »

Արտասահման

15 Ֆրք.

ՄԵՐ ՊՈՏ. ԲԱԺԱՆՈՐԴԱՅ ԾԱՆՈՒՅՈՒՄՆԵՐԸ ԶՐԻ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՆ

ԲՈՎԱՆՊԱԿՈՒԹԻՒՆ

Ազգային Տեսութիւն

Գրաբարի մրցում մը

Զանգակ (քերթուած)

Մեռցնող Սիր (նորավիպ)

Վերջին բանաստեղծը (Գեղմ. բանաստեղծութիւն)

Երկրագործութիւն

Ստեղծագործութիւն

Քաղաքական Տեսութիւն

ՄԵԼԳՈՆ Յ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

ԹԷՈՐԵԻԿ

Ի. Յ. Պ.

Ա. Լ.

40 փարայ 40

Տպագր. «ԾԱՂԻԿ» Օրաբերքի
Կ'Պոլիս, Ղալաթիա, Համուր-Պալա Խան

Արտոնատէր Ա. Լուսինեան

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳԻՏՈՒԹԻՒՆՔ, ԴՊՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐՈՒԵՍՔ ԵՒ ՕՐԱԼՈՒՐՔ

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ

ՏՆՕՐԷՆ

ԵՐՈՒԱՆԴ ՏԵՐ-ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

ԲԻԻԶՆԴ Մ. ՊՈԶԱՃԵԱՆ

Գ. ՇԲԶԱՆ

1900 ՅՈՒՆԻՈՒՐ 15

ԹԾԻ ԴԾ

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Դաւառէն գրող մը մեր մասնաւոր ուշադրութիւնն հրաւիրած է սա՛ փափուկ կէտին վրայ թէ Տ. Բարգէնի Շրջաբերականին հետ պէտք չէ խաղալ, թէ այդ Շրջաբերական իր կարեւորութիւնն ունէր, և թէ «դուք գաւառի մէջ ապրած չըլլալով, չէք կրնար հասկընալ ամուսնալուծման պէտքը»։ Եղբայր, դուք ալ մեր միտքը չէք հասկընար «կոր»։ Ո՛վ կ'ըսէ ձեզ թէ ամուսնական կանոններու, եկեղեցական խիստ օրէնքներու պէտքն զգալի չէ։ Ո՛վ կ'ըսէ ձեզ թէ դժբախտ ամուսնութիւնները չեն քայքայեր մեր ընտանեկան յարկերը, թէ ամուսնական պղծութիւններ ճշմարիտ և ահաւոր չարիք մը չեն մեր սոհմային կեանքին համար։ Ո՛չ, եղբայր, ո՛չ, այդպիսի վատթար սկզբունքի չենք հետեւիր։ Գրողներուն և ընթերցողներուն ամէնէն մեծ դժբախտութիւնն այն է յաճախ որ զիրար չեն հասկնար, չեն ըմբռներ երկրորդներն առաջիններուն ոգին։ Ի՞նչ ընենք, չկայ

փորձաքար մը՝ որ իսկոյն թերթերուն վրայ դրուելով՝ անոնց բուն ոգին հասկըցնէ մեզ։ Առաջին օրէն երբ այս ամուսնութեան խնդիրը սկսաւ ծեծուիլ, մեք ձայն բարձրացուցինք ուրիշ տեղ թէ արժան և իրա՛ւ, եկա՛ծ է ժամանակը՝ որ օրէնք դնենք, կանոն սահմանենք և լուծենք այնպիսի ամուսնութիւններ որք ընկերային կազմակերպութեան, ընտանեկան սրբութեան կը հակառակին, ամուսնութեան ոգին կը խաթարեն։ Ումանք կը պնդէին թէ մեր նախնիք, կամ ուրիշ խօսքով, Հայ եկեղեցին ամուսնալուծումն ընդունած է. այս սկզբունքին հակառակեցանք պատմական տեսակէտի մը վրայ կը թնա՛ծ, Հայ եկեղեցին պաշտօնապէս ամուսնալուծում ընդունած չէ ինչաւ, ինչպէս ընդունած են ուրիշ եկեղեցիներէն ոմանք։ Այսպիսի դրութիւն մը պաշտպանել յանցա՛նք էր միթէ մեր կողմէն։ Պատմական դրութիւն մ'էր այս, թերեւս սխալ էր մեր կարծիք, առիկա ուրիշ խնդիր։ Գլխաւորը սա՛ էր թէ մեր կարծիքով Հայ եկեղեցին բնաւ պաշտօնական ամուսնալուծում ընդունած չէ։ Այս այսպէս։

Բայց միեւնոյն ատեն կ'ըսէինք թէ Ամուսնութիւնն ընկերային դաշինք մ'է ա՛յն չափով ի՛նչ չափով որ հոգեկան խնդիր մ'է: Հոս կը տարբերի գործը: Ամուսնալուծումն հարկաւոր է, կ'ըսենք, այս պարագային, ինչպէս արդէն ընդունած են բոլոր քաղաքակիրթ ազգեր: Մեք ի՛նչ կերպով կ'ընանք տարբեր մը: տածել ամուսնական անկանոնութեանց հանդէպ: Ո՛ր անկանոնութիւնը կրնայ տեւական ըլլալ և մեծ չարիք չպատճառել: Ընկերային կազմակերպութեանց մեքենան երբ կ'սկսի ճռնչել, ճաթած ձայն հանել, կը փոխեն զայն, ահա ամէնը: Ամուսնութիւնն ալ նոյն կազմակերպութիւններէն մին ըլլալով երբ կը տեսնուի որ անկանոնութիւն մտած է անոր մէջ, կը փութան այդ չարիքը դարմանել: Ահա կանուխէն մեր սկզբունքը:

Սակայն ամէն բարեկարգութեանց պէս եկեղեցական բարեկարգութիւնն ալ ժամանակի կը կարօտի, որպէս զի մէկ չարիքը դարմանուած պահուն, յանկարծ ուրիշ չարիք մը չծնի: Մեր տեսակէտը խոհեմութեան և շրջակայեցութեան տեսակէտն է: Հարկ է, ընենք ամուսնական բարեկարգութիւնը, բայց ժամանակը բերենք աչքի առջեւ: Եթէ աշխարհականներու ձեռքն ըլլայ վերջնական ձեւ մը տալ ու է եկեղեցական խնդրոյ, մինչեւ հիմա շատ բաներ կրնայինք ընել և ըրած էինք արդէն, բայց եկեղեցական իշխանութիւն մ'ունինք: վերջապէս հաստատուած բոլոր կանոնք կը պահանջեն որ եկեղեցական բարձրագոյն իշխանութիւնը նախաձեռնարկ ըլլայ եկեղեցական բարեկարգութեան: Արդէն ժամանակ է մ'ի վեր ազգային օրաթերթեր ձայն բարձրացնած էին եկեղեցական բարեկարգութեանց համար: Աշխարհական գրողք իրենց պարտաւորութիւնը կատարեցին, երբեմն չափազանց եռանդ ցոյց տալով, այս ալ հոգ չէ: Աշխարհականք աշխարհականներու դէմ գալով, թեր ու դէմ գրեցին, խնդիրը

լուսաբանութեան մտեցաւ: Երբ Տ. Բարդէնի շրջաբերականն երեւցաւ, չհաւնեցանք, ինչո՞ւ. որովհետեւ ո՛չ միայն յաւակնոտութիւն տեսանք հոն, այլ տեսակ մը պուռտախօսութիւն, զի պարզ վարդապետ մը, կամ անոր արբանեակ ուրիշ վարդապետ մը, ի՛նչպէս պիտի կրնան ամուսնական բարեկարգութեան թմբուկը զարնել ու գործադրել՝ երբ կրօնական բարձրագոյն իշխանութիւնը փութաց խկոյն դատապարտել վարդապետին փութկոտութիւնը: Միշտ այնպէս խորհած եմ որ մեր կղեր շրջահայեաց չէ, ժողովրդային կիրքերովը կը տողորուի: Կաթոլիկ և բողոքական կղերներն աւելի կարգապահ են, աւելի խոհեմ, աւելի շրջակայեաց են: Մերոնք կարգապահութեան յարգող չեն նոյն եռանդով և հպատակութեամբ որքան կաթոլիկ կղերք և բողոքական երէցք: Այս կէտին վրայ պիտի ծանրանանք ուրիշ առթիւ:

Մեր գաւառացի թղթակիցք իրենց թեմականներուն ընտանեկան կեանքէն ա՛յնպիսի գայթակղալից դէպքեր կը պատմեն, ճշմարիտ տուաճներ. որոց վրայ կը զարմանանք նախ, և ապա կը յաւինք: Միայն թէ ոչնուազ կը զարմանանք որ թղթակիցք տեսակ մը միամտութեամբ ամուսնալուծման պակասին կը վերագրեն դատախարակութեան թերութենէն առաջ եկած դէպքերը: Քստմանքի արարքներ կը պատմեն, և մեք անմիջապէս կը հետեւցնենք իրաւամբ թէ մեր տղնիւ և բարեբարոյ գաւառացիք զոհ կ'ըլլան թերի դատախարակութեան: Մոռցեր են իրենց պապերուն պարզ կեանքը, առաքինի կենցաղավարութիւնը:

Թղթակիցներուն այդ պատմութիւնները կարդալով կը տխրինք. մեր ընտանեկան կեանքի այդ տուաճները մտածել կուտան մեզ և կրթական մակարդակը շատ վար ինկած կը տեսնենք:

ԳՐԱԲԱՐԻ ՄԻՅՈՒՄ ՄԸ

Եւրոպացի նշանաւոր արեւելագէտ մը, գրաւոր Հայերէնի հմուտ, փորձելով քաղ. ճառ մը գրաւորի վերածել և սակայն չյաջողելով իր փորձին մէջ, յղեր է զայն Կ. Պոլիս իր հայ բարեկամներէն միոյն, խնդրելով որ հայ գրաւորագէտներ թարգմանեն զայն հին հայերէնի ա՛յն դիւանական ոճով՝ որով կարելի էր թարգմանել եթէ Ս. Սահակայ, Ս. Մեսրոպայ, և կամ Ս. Թարգմանիչներուն առջ. րած դարուն մէջ խօսած լինէր նախարարապետ Լորան իր այդ քաղաքակրթ. ճառը:

Գրաւոր թարգմանութեան կրնան իբր տիպար ծառայել Դէմոսթէնի Փիլիպեանները և Կիկերոնի Կատիլինականները, զորս Հոյր Արսէն Բագրատունի գրաւորի վերածած է:

«Հանրագիտակ»ի յանձնուած է այդ ճառին անգլիերէն տպեալ օրինակը զոր մաս առ մաս պիտի հրատարակենք, Անգլիերէն լեզուն նուազ գիտցող կամ բնաւ չգիտցող գրաւորագիտաց դիւրութիւն մ'ընծայած ըլլալու համար, անոր աշխարհաբարն ալ ի միապիտ:

Արդ, կը հրաւիրուին Պոլսոյ, գաւառներու, Արտասահմանի աշխարհական թէ կրօնական, Հայ, կաթոլիկ թէ բողոքական, բոլոր գրաւորագէտ աղջայինք, որք նախնեաց ընտիր հայերէնի իրենց մասնագիտական կտու ուսում. նասիրական ճիւղ ընտրած են, որպէս զի սրեն իրենց լեզուն ու գրիչը, և խլեն գալինին:

ՈՍԿԵՂԵՆ ԳՐԻՉ ՄԸ ՄԻՅՈՒՄ ՄԿ պիտի ընդունի սոյն գրաւոր մրցման մէջ առաջին հանգիստացող թարգմանիչը:

Մէկ ամիս սլայմանաժամ կ'որոշենք հեռաւոր մրցակիցներու դիւրութիւն ընծայելու համար: Սոյն մրումնայ պայմանաժամ կ'սկսի Անգլ. Ճառին մաս առ մաս հրատարակման աւարտելէն վերջ: Մրցակիցք ամբողջն ի միասին թարգմանելէ ետք կրնան ուղղել «Հանրագիտակ»ի Տնօրէնութեան հասցէին: Մէն մի մրցակցի կողմէ հասած թարգմանութիւն խը նամով և կնքեալ պիտի պահուի, և պայմանաժամուն աւարտելէն վերջ՝ մասնաւոր յաւելումով մը առանձինն պիտի հրատարակուին ամենքն ի միասին, անգլ. բնագրովն հոն դերձ: Սպառումն զոյայած գումարը պիտի յատկացուի հանրօգուտ նպատակի մը:

Մրցակիցք, ընթերցողաց հետ, անշուշտ հետաքրքիր պիտի ըլլան այժմէն իմանալու թէ ո՞ր Ատենաբ պիտի դատէ գրաւոր թարգմանութեանց բուն, իսկական արժէքը, կամ ո՞ք պիտի կարգուին դատաւոր, որոց ձեռն. հասութիւնն անժխտելի, և արձակած վճիռն ալ անվիճելի, անբեկանելի ըլլայ: Յայտնի է թէ չունինք առ այժմ Հայերէն Դպրութեանց Կաճառ մը, զոր երբեմն փորձեցինք ունենալ, և հայ լեզուին ծովացեալ մեղացն համար անյաջող ելանք, Կաճառ մը որ իր Արիստաղոսեան հասուն վճռով՝ ինքն ի պաշտօնէ հըռ. չակէ մրցանակի արժանի թարգմանութիւնը:

«Հանրագիտակ» խորհելով թէ իր դատաստան, իբրեւ մէկ վկայի ձայն, բեկանելի խճճեցի ու անբաւական համարուի, այս, խնդրոյ մէջ ճերմակ քուէ տալու պարտաւորուած է: Ուրեմն գրաւոր թարգմանութեանց յաւելուածը թէ՛ Պոլսոյ, թէ՛ գաւառաց և թէ՛ արտասահմանի (ինչպէս Վենետիկի ու Վիեննայի Ս. Հարց) մէջ իրենց գրաւորագէտի հեղինակութեամբ ծանօթ ազգային գրագէտներու դատաստանին պիտի ենթարկուի: Քննիչներուն զրաւոր դատաստանք պիտի նկատուին Գրաւորի պաշտօնական Կաճառի մը կամ Ակադեմիոյ մը պատկառելի քուէները, որոց մեծամասնութիւնը շահողն է անշուշտ մրցանակին տէրը:

«Հանրագիտակ»ի առաջարկած մրցումը թէեւ այս անգամ պատահական է, սակայն գրաւորին համար ալ ոչ նուազ պատիւ մ'է զոր կը սիրէ չզլանալ յետին կամչոտ աշխարհաբարեանն իսկ: Այսուհետեւ ուրիշ նիւթերու վրայ ալ պիտի տարածէ մրցման ու մըրցանակի դրութիւնը:

Անոնք որ տարին մէկ անգամ Ֆրանսական թերթերու մէջ կը կարդան Առաքինութեանց մրցանակներ հաստատող բարերարաց և այդ մրցանակներուն արժանացող առաքինեաց յաւերժաբան անունները, անշուշտ որտաղին ցնծութեամբ պիտի ողջունեն «Հանրագիտակ»ի հաստատած սոյն մրցման ու մըրցանակի դրութիւնը: Լրագրական այսպիսի նորութիւն մը թէեւ առաջին անգամ կաղն ի կաղն կ'ընթանայ, սակայն նորածին մանուկն է այն որ յուսալից ապագայ ունի իր զմեռանդներու կտակի դանձերուն վերածող

գանձանակի լուսան է: Անշուշտ ոսկեղէն գրիչ մը մրցանակ խոստացող ազնիւ ազգայինը մինակ չմնար, և ուրիշ ազնիւ սիրտեր ու մեծահոգի ազգայիններ ևս այլ և այլ մրցանակներով գերական նոր նոր մրցումներ կը բանան, և «Հանրագիտակ»ի հաստատած մրցումներու ցանկն ու հանրագումարը իւրեքն ա՛լ աւելի կը ճոխացնեն:

«Հանրագիտակ»ի սոյն յայտարարութիւն բաց հրաւէր մ'է՛ ամէն անոնց որք թեթեւագին կամ ծանրագին մրցանակ մը առաջարկելով՝ իրենց նախասիրած գրական, գիտական և արուեստական նիւթին կամ խնդրոյն վրայ մրցում մը բանալ կ'ուզեն: Սպասենք և յուսանք:

ԶԱՆԳԱԿ

ԱՌՇԱՐՔԵՆ ՂԱԶԻԿԵԱՆ

Ադրիական ալիքներովն իր զուարթ Շուրջանակի կը կազմէ պա՛ր մը կեանքոտ Ս. Ղազարու Մենաստանին բոլորն, հո՛տ, Որ տարածէ իր թերթերը, իբրեւ վարդ:

Վաղազարթոյց չիկնոտ զեփիւռն առտըւան, Պարտիզակի յե՛ց լեռներուն ինքը հիւր, Կուգայ բարեւն հոգիիս տալ, բարե՛ւն իւր, Ուր կը գտնեմ սրբախ խանդին օթեւան:

Եւ ընդմէջէն փայփայանքին այդ անուշ Կարծեմ լըսել Սուրբ Ղազարն որ զօղանջէ իր օղառկախ բարձրութենէն, ո՛հ, ի՛նչ յուշ...

Միահամուռ ու միահո՛յլ ալիքներ իրենց կոչը կը զուգորդեն դէպ յեթեր.— վանքի Զանգա՛կն որ զիս իրեն կը կանչէ՛.

Պարտիզակ

ՍԵԼԲՈՆ 3, ՅՈՎՍԷՓԵԱՆ

ՍԵՌՑՆՈՂ ՍԵՐԸ

(ՆՈՐԱՎԷՊ)

Ա.

Տարիքոտ զոյգ մըն էին Պ*** եանները, ունեւոր՝ շխտակ ճամբուն երկայնքը պառկող կալուածներուն պատկառելի հասոյթովը:

Մտին էր, միակ աղջիկնին որ համ ու կենդանութիւն կը ցրցքէր ասոնց տունն ու ձիւնոտ կենցաղին վրայ: Իրտող աչք մը սաւայն ասպէս մնար պիտի թէ ի՞նչպէս աս աղջկան գիտակիւն մէջ չիկար խիծ մը կամ նիւ մը որ ծնողքէն մաս մը յիշեցնէր:

Արքէնի սվէթ հասակ մը որ — ինչպէս կ'ըսեն — քովը կեցողին շուք կ'ընէ, խայծղանի պէս փայլուն սեւ մազերէն բռնէ՝ լանջքին թարմ այտուցը ու մինչեւ մանրիկ ոտները բարեձեւութեան և շնորհի կուշտ փարթամութիւն մը, որուն վրայ բոց կը դնէին իր աչքերը, բիբերուն սեւը՝ անգո՛ւթ կերպով խոշոր՝ ուր խռովող տրտմութիւն մը կը պսպղար:

Հարաւի կլիման յարմար դատած էին բժիշկներն այս ալեւոր զոյգին, իրենց կեանքին համբուած օրերը քաղքի ժխորէն հեռու հանգրուանի մը մէջ անցընելու գիտութեամբ, ու ասոր համար Փատրիկալը կար:

Բայց քանի մը ամիս կ'ընէր չէր ընել որ Բերայէն հող կրուած էին, և ահա նոյն խումբը չորիկ շրմոր երիտասարդներու՝ մէյ մէկ աւիթ ընձեռած՝ կը մտնէր կ'ելլար տուններին, սքանչացումի անյագ ապշանքով և դարպասի այն չքեղ պաշարով որ չէր, չէր քշուել սակայն: Պարտոյ տեղը կը բզզային այս շողջողուն ապագային բոլորքը, և իրենց մեղուի ըմբոստ դեգերումները շուտով զգացուցին իրենց թէ այս ծաղիկը փակ կոկոն մը կը մնար միշտ, իր գոյնն ու բուրումը գոց թերթերունքին մէջ պահոււթեցուցած:

Հօրմէն մօրմէն հակառակ չափազանց

սիրուած ըլլալուն՝ քաջոտ մը չէր դարձած Մառի իր նկարագրին մէջ այն ընդոծին ըր- ջութիւնը կար խմորուած որ զինքը զերծ կը կեցունէր կանացի այն փափուկ աղէտքէն որ կը կոչուի չիացունի:

Ծնողքը աղիկաւի ձգած էին զինքը, ո՛ր- չափ թաղձալով որ նոյն իսկ ան ընէ օր ա- ռաջ ընտրանքը իր կեանքի ընկերին:

Աչոտ տարօրինապէս բախտաւոր փրթած էր համակրանքը վաստակելու այս աղջկան: Ծանրագլուխ երիտասարդ մըն էր, ու իր շար- ժուձեւին, արդուգարդին և խօսուածքին մէջ չէր գտած Մառի սկիւնքը կամ սեթեւեթը ուսկից յափրացած գանձ էր ալ Փողկապին պզտիկ սեւ հանգոյցը, մաղբրուն գանգուր նէկիժէն ու ձերմակ պառկուկ օձիքը միշտ նոյնն էին, ու մինակ աս տղան էր որ լուռ պաշտող մը եղած էր անոր անսահման աղ- ուորութեան, նայուածքին մէջ դնելով միայն զուսպ մըրիկը իր տարփանքի ովկէանին, այն երկար, հանդարտ ու անթափ շայուածքին որ իրեն չի նայուած ատեններուն գիտէր սեւեռուիլ լոկ:

Երթալով կ'աճէր այսպէս Մառի մէջ բողբոջը սիրոյ բարունակին:

Երեկոյթներու հուրին էր ինք: Ան ի՞նչ երանութիւն խմբումը սարքողներուն ու ներ- կայներուն ալ համար, եթէ հաճէր երթալ իրեն տեղացած քարթերէն յետոյ: Հազարու- մէկ ծեփծեփալից ներքոյներու մէջ կը խըղ- գէին զինքը, ամէն անգամ որ վախէ մը խոնջ՝ գար նստիլ կարմիրները երեսին, ու ամէն անգամ որ տանէին նստեցնել դաշնամուրին առջեւ: Աչոտը քովը կ'ունենար ան ատեն, ատ խելօք, ամօթխած տղան որ ամբողջ լքուն դիրքով մը գործիքին յենած՝ կը հե- տեւէր անոր զարնուածքին, երբ Մառի լոյս կտուցներու առջին Սուսի տ'ավուիլը կ'ա- ծէր, կամ Որբաօջ տ'ամուռը:

Հատնումի, մաշումի գիւերներ էին ասոնք Աչոտի համար, որ իր կ'արգին չէր ժտե- բնաւ փսոր մը խօսք իր թոյլելու այն տա- ուսարդին զգացումէն որ կը կրծէր, կը կրծէր զինքը անգութ կերպով:

Սիրակի ցորեկները չատ անգամ Մառիէնց կ'ըլլար քանի մը ժամ: Այն քուր աղբօր տե- սութենէն յետոյ զոր Մարմարա նայող այդ

սալոնը քաշուած կ'ընէին՝ Մառի կը կարգար անոր Քօթէն հնչեակ մը կամ բանթում մը, իր կանացի նուրբ ու թրթռուն առողանու- թեամբը ցայտեցնելով փախստեայ հոգին քեր- թուածքին:

Ակնարկը ծովուն և անանջրպետ հորի- ղոններուն խրկած ու դիւթուած այս ըն- թերցումէն՝ Աչոտ կը տապալուէր այսպէս լալ ուղողի ու լալ չկրցողի մղձաւանջով: Ա՛ղգար թէ իր պաշտումը խղունջի սողոս- կում մըն էր լոկ, անոր ձայնէն գերուած, ա- նոր շուքին փակած . . .

Տխմա՛ր: Ընկերները ո՛րչափ իրաւունք կուտային ինքզինքնուն՝ այս մակդիրը գոր- ծած ելնուն, ամէն անգամ որ փողոցը հան- դիպէին իրեն, ծեծ կերածի մը թափթըփած ու անտրտունջ վիճակովը:

Բ.

Բայց ինչո՞ւ:

Բոլոր զինքը ճանչցողները զարմանքով նշմարած էին որ Մառի յանկարծ, առանց որ և է նշանակիչ պատճառի, սեւեր հագ- նիլ սկսած էր:

Ծնողքը շուտով կրցած էր համոզել, ա- ռարկելով թէ նորոյթի տարապայման քմայք մըն էր ատ ուսկից տարուած էր, անշուշտ սուղ ատենի մը համար: Աւ իրա՛ւ ալ վայլած էր իրեն սեւ անդուսէ այդ անզարդ պարե- զօտը: Այն մութ շուքերուն պէս որ նկար- չութեան մէջ դէմքին քով դիտմամբ կը խտացունեն՝ անսահմ կերպով ցայտեցնելու համար հմայքը էգ գեղեցկութեան, սուգ բուրոզ այս գոյնը այսպէս չըջանուած էր զինքը շնորհայի, կաթ վայելչութեամբ մի:

Աչոտի՛ն հետ ի՞նչպէս վարուէր: Մառի չէր կրցած ստե՛ անոր անհամբեր կերպով խու- զարկու տկնարկներուն վրայ, ու բերնուցը ք- նեղու տեղ վերլուծումը այս թնձուկ առեղ- ծուածին՝ կը շրկէր անոր հետապայ գրո- թիւնը:

Ասիկայ փակածքը պիտի ըլլար ալ ինչ տարփանքին:

* *

Երգնկայի չըջակայ աւաններէն Քէմախէն էին Դանիէլ ու Խաչօճնց Մարիամը: Մայրեր:

նին մէկ բերած էր զիրենք աշխարհ, ու ա-
նոնք, առանց հայրիկի, կեանքի աւօտը ու-
ջունած էին տաքուկ բոխերիկին մօտ, քով
քովի դրուած օրօրոցներուն մէջէն փոխն
ի փոխը ժպտելով իրարու:

Երբոր մէկ օրրանի այս ջուխտը ճշտորիւ
սկսած էր, դրոտմայիս ըրած էին կոնկա-
նանց խոտերուն վրայ, յետոյ կամայ կամայ
մեծնալով ինքզինքնին տուած տղու անմեղ
զրօններու, մէկտեղ վազվառելով ամայի սե-
պուհ լեռներէն վեր, քարայծներու պէս ու-
տոստելով բլուրէ բլուր ու հեւ ի հեւ հալա-
ծելով այն փախստեայ շուքերը զոր վերէն
քալող ամպերը կը փռէին վար: Իրենց ափ
մը ոչխարները կը տանէին արծել ամբողջ
օրը շուրջի դաշտերուն մէջ, անոնց խոտի
մըրթ մըրթ ճարակումին ակոնատես ըլլալով
հեշտօրէն: Յորեկները կ'երթային գետափ,
ձեղքուկով քաթայ ծամելու և ափացի կուշտ
կուշտ արբենալու բլխող բիւրեղ ակերուն
ջուրը սառնորակ:

Միւրած էին զիրար: այդչափ միայն Ձեմ
գիտեր ինչ կերպ կը սեկնէ զարավերջի կիրթ
մարդկութիւնը այս խօսքը: Իրենց գեղացիի
մրգուղ միտքը թէեւ չէր կրնար զօրել թա-
փանցելու այն լուսաւոր ճառագայթումէն
ներս որ «սէր» բառէն կ'արտացոլայ, բայց
կ'զգային թէ անմոռն խլրտող եռեւեռի մը
սկսած էր շրջաններ ընել երակներուն մէ-
ջէն:

Երբեք չէ՞ պատահած որ երբ խօսի մին,
միւսը մոռցած ունկնդրելու դերը՝ անուշ
յմայլանքով դէմինին թարթիչներուն նայի
երեսներուն խնձորին կամ պրկունքին կեռա-
սին: . . . Գաւառի տարփանքները ասան
կ'սկսին, վայրի շուշաններու պէս անբիծ ու
տառաւորներու պէս անենկ:

Մարիամ կը յիշէր ան օրը ուր առաջին
անգամ սարսուած էր և խռովքով մը խպնած՝
այն պիշ հայուհին վրայ զոր Գանիէլ յառած
էր իր հոլանի սրունքներուն առուակին մէջ
լողացած պահուն:

Օրն ի բուն բնութեան գիրկէ՝ թափառ-
կոտ՝ յաճախ կը մոռնային իրիկուան վրայ
հասնիլը ու վազն ի վազը հիւզակնին կ'ար-
տօային իրենց մոզիկ դառներուն հետ, ու-
րոնց բոժոժը գուարթ ալէլու մը կը ձայն-

ձրնէր վերջալոյսի տարտամութիւններու
մէջ:

... Տասներկու գարուն երբոր համրած էին
ալ, մայրերինն նշանեցին զի էնք:

Կեանքն իր առտուն ունի լուսածղի, Ման-
կութիւնս, իր միջօրէն արիաւէտ՝ Պատանու-
թիւնը, ու իր վերջալոյսը նուաղ՝ Մերոյթը:
— Գեղջուկ կեանքի մէջ երբոր նշանուիս, կը
դառնաս բան մը որ աս բալորին պէսն ու աս
բալորէն ալ աւելին է: Նախ ինքզինքդ երա-
խայ կը զգաս՝ խորհրդով ալ լի այգէն, առոյգ՝
պչրոտ ցորեկէն, ու երազուն՝ մարմնուկ ի-
րիկնամուտէն աւելի: Վասն զի ներսդ գաղտ
պահած ունի՝ աղուորը, հզօրը, լուսաւորը,
քնքուշը, անուշը, Սէ'րը . . .

... Քանի մը ամուսնի նշանած, նորէն
կը կրկնուէր յաւիտենական պատմութիւնը
գաւառացիին Գանիէլ պէտք էր Պոլիս դաղ-
թէր վերջին նամակին վրայ զոր հօրեղբայրը
ղրկած էր հարսին:

Օր մը լման լացած էին ասոնք: Բաժնուե-
լու մատնումը մեռնելու չափ կը տխրեցնէր
զիրենք: Պացին ան դաւար դաւար ճամբանե-
րը ուր իրենց սէրը տարած էին պտուղունե-
ր ոչխարներուն հետ, ու Մարիամ աչքերը ար-
ցունքէն ուռած՝ ըսած էր,

— Ձէ', չի գա՞մ պիտի ալ հոստեղուանքը,
մինակս ի՞նչ ընեմ . . . Եւ երկու նշանած ի-
րենց կարօտի տաք համայրին հետ փոխա-
նակած էին մէյմէկ փունջ մազ, իբր երաշխիք
անմոռացութեան, եռանկիւն պզտիկ քսա-
կիկներու մէջ կարուած՝ կախելու վիզերնէն
վար:

Գանիէլ հոս գալուն Կեղրոնական դրուած
էր ուր սկսեր էր իր պինդ յարատեւումը ու-
սումի, դուրսի հուրին հուրը սիրտին մէջ,
Ս. մէն թղթատարի իր նամակն ունէր խրկե-
լիք, պարզ, անշուք տողեր որոնց մէջ կարօտի
ցաւը կը կոտորար միշտ:

Ճակատագիրը այս գոյգին համար ետքի
պահած էր կարծես իր սեւը: Տարի մը չան-
ցած Մարիամ կը կորսնցունէր իր մայրը և այն
ինչ որբ մնացած՝ տեղացիներու ձեռամբ Պո-
լիս բերուելով որբանոց կը դրուէր:

Ընտրանքը իրեն յանգած էր այն օրը ուր
հարուստ անորդի ընտանիք մը հող այցելուն՝
հոգեգաւազ մը փափաքած էին առնել: Ու-

սուտը չէին զլացած անոր, նաեւ քաղաքակրթութեան բոլոր այն սրահանքները որոնց չիժ առ չիժ ըմպանքին հետ գեղջուկ անտաշ Մարիամը կը պատրաստուէր Հայ-լայթի աղջիկը ըլլալու: Եւ յաջողած էին:

Երեկոյթի մը, երբ Վէպէրի լ'Օռաժը կ'ածուէր գաշնակով, Մարիամ կերպարանափոխ դտած էր ինքզինքը և յուզումէն աչքերը թրջած՝ մտովի տարուելով այն օրերուն մանկութեան ուր Գանիէլի հետ ամայի դաշտին մէջ յանկարծահաս փոթորիկի մը, բռնուելով, սօսիի մը տակ գացած էին ապաստանիլ, երբ շրթունքնուն վրայ սառած և սահմուկած մտիկ ընելով անկող շփումը ամպերուն:

Գեղեցիկ թելադրիչ մը եղած էր ստիկա որ սրտանց սիրէ դաշնակը, պաշտէ ու սովորի ալ: Մ. Փուռլանի յաջողապէս գրած էր իր մէջ խայծը այն անո՛ւն թովանքին որ ստեղ նաշարին կաթ մատներէն կը կաթլըթի...

Այսպէս Խաչճեանց Մարիամը կը գտնար Օր. Մառի Պ**հան, իր տալիսախարհիկ բոյսի *veritun* ինքնաբերաբար փոխելով կլիմային և ջամբուած խնամքին աղքեցութեամբը:

Երբեմնի այն լոյս անուշքը որ փթթած էր իր հոգիին կոյս սկաւառակին վրայ՝ կրգգար որ մարիլ սկսած էր ան, անհուն պարտ մը լայնցնելով հոն, ու հին անուշտորփները կայնած՝ լսնջին տակ—Բայց իր սիրտը չէր յարած ընաւ այն տարասեռ թարմ էակներուն որոնք պիտեմնին վեր սանարած ու լամբակին միշտ ծաղիլոտ՝ կը վխտային հիմայ իր շուրջը, ու երթալով կը համոզուէր որ համակ կեղծիք կը բուրէին անոնք, իրենց փողպատէն բռնէ մինչեւ ոսկորնուն ծուծը չողովի ջնարակը վրանին: Մինչեւ այն օրը ուր վերջապէս բախտը իր գէմը հաներ էր Աշտար: Իր փլած երջանկութեան վրայ կոճակ տալ սկսեր էին նոր յուսադրումներ կեանքի, ու նորէն ծայր տուեր էր այն ելեքտրակահութիւնը անզուսպ որ անասունին քով կ'ըրքէ և մարդուն՝ սէր:

Ահաւասիկ պատմութիւն մը քեզի որ հովուերգութեան պէս սկսաւ ու ուսմանի պէս, պիտի աւարտի սակայն:

Ո՛չ մէկ դրուալը գիտէիր անոր, ու թերեւս ալ պէտք չունէիր իմանալու Բայց չո՛ւնչ առ պահ մը: Ռոմանի պէս պիտի աւարտի կ'ընէի, կ'ուզե՞ս որ շարունակեմ:

Անցեալները, անաշխատ մէկ բուպէր, տարօրինակ բաղձանք մը արթնցաւ մէջս գիրի առնելու և հրատարակելու նորավէպ մը այս կեանքէն: Զայն յուզիչ ընելու միակ դիտումով փափաքեցայ որ մէջը Գանիէլ մը յիմարէր անպատճառ իր լքումէն: Ճշմարիտ ենթակայէ մը տալաւորուելու համար գիմեցի բժշկի մը, հօրս աղնիւ բարեկամին, որ ինծի յօժարութեամբ տարաւ պտըտցունել հիւանդանոցը:

—Տեսէք, ըսաւ, աս բոլորին մէջ միմակ սա կայ, անդին կայնողը սրուն հոգեբանութիւնը վերլուծած ու հասկցած եմ որ խեղճը սէրէն խենդեցած մըն է: Երանի թէ կատարի յիմար մը ըլլար, զսոլաշապիկ հագցունէի: Սա վիճակին մէջ սիրտդ վրայ չերթար նայելու: Գլուխ չպիտի փրցունէ, մե՛ղք: Շատ հետաքրքրուեցայ գիտնալու իր նախկին կեանքը, ի երեւս չնչին հակադդեցութեամբ մը գինքը փրկելու յոյսով: Գրագիր է եղեր: Օր մը վաճառատունին այցելեր են քանի մը կիներ ժապուխեալ տոմարով, տոնք չափու դուրս ելած, տապալուծի և ապակիներու բեկումի ազմուկ մը լսուեր է. վագեր տեսեր են աս սղան փափին գլուխ, երեսը բերեղի կտորներէն արրենլուայ և զգայաղիկ վիճակի մէջ: Գլխու պտոյտի մը վերագրած էին այս արկածը, բայց նախնական դարմաններէն վերջ, երբ ա՛լ գէմքին սկըզուքը սպիացած էր՝ հոս բերուած էր վերջնապէս, ուղեղով հիւանդի մը ամէն ախտանիքերը վրան: Միակ փրկութիւնը, օրիորդ, թերեւս ան այցելող կիներէն մին ըլլայ...

Անձկութենէս պայթելու աստիճան հետաքրքրուելով մտիկ էի ըրեր տօթթորին անգութ պատմութիւնը: Գաւառի կարօտեցող նպաստի համար ե՛ս էի ելլողը ծանօթ տիկիների մը հետ...

—Գանիէլ, խափու ձայնեց տօթթորը յանկարձ մեզի դարձնելու համար զայն:

Այս անունին վրայ կ'զգայի որ ծնողներու կը կտըրտէին և թէ կրակէ հեղուկ մը գլխէս վար կը թափուէր:

Ո՛ւհ, Աստուած իմ, տեսա՛յ զինքը, միսը
ոսկորին փակած կմա՛խք մը, ու աւերակ դէմ-
քին վրայ ծամածուռ ժպիտ մը որ գերեզմա-
նէ՛ն կուգար կարծես . . . :

Խեղագարը քանի մը քայլ յառաջացեր էր
արդէն, ու

— Ինծի կուգայ որ . . . ճանչ . . . նաւ . . .
պի . . . տի . . . վանկերը թափթըփեցին իր
կապարի գոյն շրթունքը: Յետոյ թոթուեց
գլուխը և ստորին շրթունքը տարակուսանքէ
ուռեցուցած՝ նորէն անդին դարձաւ իր յա-
ւիտենական պազը խրկելու ճիտին ու ճիտի
առարկային . . . : Աս էր արդէն ըրածը, խե-
ւուկ, տենդոտ շարժումներով մը, ամբողջ
մէկ քառորդ ժամուան պահուն որ հոն էի
մնացեր:

Շաբաթ մը ետքը, երկրորդ այցիս, ար-
դէն քանի մը օրուան թաղուած էր ան:

ԹԻՆՈՒԻԿ

ՓՈԽՆՋ ԳԵՐՄ. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ

Ձօնեալ առ Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՎԵՐՋԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

«Ե՛րբ դուք, ո՛ր բանաստեղծք,
Պիտ՝ յողնիք երգելէ.
Հին երգն յաւերժական
Ե՛րբ ի յանգ պիտ՝ ելնէ:

Եղջիւնն առաւելեան
Վսպուց չէ՞ դատարկուած,
Համայն ծաղկունք քաղուած,
Ու աղբերք չե՞ն ցա՛քած:» —

Յորչափ արփուոյն անիւք
Կապոյտին մէջ դառնան,
Ու մի լոկ մարդու աչք
Դեռ առ այն բարձրանան.

Յորչափ երկինքն յինքեան
Ամպոտայ ու շանթ ունի,
Ու անոնց զայրոյթէն
Սիրտ մ՛ահով սառանի.

Յորչափ յետ փոթորկաց
Ծիածանը ծագի,
Կուրծք մ՛անձկայ տակաւին
Խաղաղ ու հաշտ կեանքի.

Յորչափ աստեղց սերմեր
Յանէ գիշերն յեթեր,
Ու դեռ մարդ մ՛իմանայ
Ոսկետառ սյդ գըրեր.

Յորչափ լուսին չողայ,
Հառաչէ՛ սիրտ մը հուր,
Խարչափէ դեռ սլուրակ,
Խոնջի մը տայ կաղզոյր.

Յորչափ դարունք ծաղկին,
Հովոցք պճնին վարդով.
Յորչափ այտը ժպտին դեռ
Ու վառին աչք խինդով.

Յորչափ շիրմք սրգան
Սեւ շուքին տակ նոճեաց,
Յորչափ աչք մը դեռ լայ,
Սիրտ մ՛ըլլայ քայքայուած.

Դիցունհին Բերթուլին
Պիտ՝ իշխէ երկրի վրայ
Ու անոր հետ ցնծուն
Իր օծեալն ալ մնայ.

Ու երբ երգով ցնծուն
Աշխարհէս օր մ՛անցնի
Վերջին մարդըն, իրմով
Հուսկ քերթողն ալ մեկնի.

Արարչութիւնը դեռ,
Ձերդ ծաղիկ նոր սրաց,
Տէրն լւր ձեռքն է բռներ
Ու կը գիտէ ժպտած:

Երբ օր մ՛ըլլայ թօշնի
Ա՛լ հըսկայ այդ ծաղիկ,
Որպէս ծաղկանց փոշի,
Յնդին երկիրն ուարժիք,

Ա՛յն ատեն դու հարցուր,
Թէ դեռ քեզ իղձ մընայ,
Հին երգն յաւերժական
Յանգ ելա՞ւ հուսի ապա:

Անասդագիտուս Կո.իւն

Թարգմ. գերմանականէն
Ռ. Յ. Պ.

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

ԱՌ Պ. ՄԵԼՔՈՆ Յ. ՅՈՎՍԷՓՅԱՆ

Ի Պարտիզակ

Գողտրիկ ու գեղեցիկ Ձօնեակ մ'էր Ձանեակդ (sonnet), զոր՝ իբրեւ անսահմալ կաղանդ՝ չէք, ընծայեր էք ինձ և իմ առթիւ գրական աշխարհին, «Հանրագիտակ»ի սիրական ձեռքով:

Ձագուկ սոխակի մը ճըլվըլումն է այսօր ա՛յն, որ օր մը պիտի լինի դայլայիկը՝ Հայ Բնարի զրախտին նոր պարծանք երգեցիկը:

Պատանի գրիչդ համերական նոր փետուր մ'է. ո՞ր մուսայի թեւէն փրցուցեր, ու ճակտիս պատուոյ ճեղքնակ ընդելուզեր ետ ժըպտուն շրթունքով շնորհակալիքս:

Ուրախ եմ որ ծեր, ծաղկեր են 'ի քեզ կրթական այն խնամոտ ջանքեր որով ճիղմ հոսակդ այնքան սաշարեցին ամենուս համակրելի ուսուցիչ—գրագէտ հողելոյս Հայրիկդ՝ Պարտիզակի Հայկաբաններուն Հայր Յովսէփը, և ժրագլուխ այրի Մայրիկդ Աղւազային ուսուցչուհեաց այդ համեստ Մագթաղինէն:

Հոգ չէ՛ թէ այսօր դեղահատ կը շինես և դեղատուփ կը համրես ու դեղագիր կը կարդաս խանութին մէջ՝ բարձր դպրոցի կարօտովն հալուն: Հիպոկրատ, բժշկաց Ագամե՛ բանաստեղծ մ'էր Հեղի Ի չափ, և Հոմեր Նսգիւլապայ աշակետի մը չափ՝ դեղագէտ մը:

Բանտորին պատգամները լսելով հանդերձ, անվհատ շարունակէ Սոսմարոյ Պառնասին պատիւ բերել միշտ: Ապագան յոյսերդ կը պսակէ: Լե՛ր քաջ, լե՛ր աշխատասէր: «Թափուած քրտանց և ո՛չ մի կտթիւն անպտուղ կը մնայ», ոսկեգրած է Անմահն Խորենացին:

Ա. Լ.



ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

ԱՐԳԱՍԱԽՈՐԻՉ ՉՈՐՍ ՆԻԹԵՐԸ

Արգասաւորիչ զլխաւոր նիւթերը թուով չորս հատ են. բորակածին (ազօդ), փոսփորալին թթու (ասիտ ֆօսֆօրիք), բօդաս, եւ կիր:

Անհրաժեշտ հարկ մ'է հողին ետ տալ ինչ որ հունձքերն անկէ կ'առնեն այս չորս գոյացութիւններէն: Բայց կը սխալիք եթէ կը կարծէք թէ բաւական է այս նիւթերը հողին վերադարձնել ու է ձեռն տակ: Պէտք է որ ասոնք հողին տրուին այնպիսի կերպով մը որ բուսեղէնք կարեան սնունդմէ օգտուի, ծծելով զանոնք:

Երկիրը գրեթէ միշտ, իրեն և առանց մարդուն միջամտութեան, իրենց մէջ կը պարունակէ արգասաւորիչ նիւթերը, բայց կը պարունակէ զանոնք այնպիսի վիճակի մը մէջ, որ անմիջապէս նոյնանալի կամ իւրանալի չեն: Դարեր պէտք է, որպէս զի օդին, անձրեւնէ, բուսն և ուրիշ ազդակներու ազդեցութեան տակ, այդ նիւթերը կարենան լիովին օգտակար ըլլալ բոյսերուն:

Միջին արգասաւորութիւն ունեցող հող մը, մէն մի քիւօ գլուխ, կը պարունակէ իբր 1 կրամ «ազօդ», նոյնչափ «ասիտ ֆօսֆօրիք», 2 կրամ «բօդաս», և շատ աւելի կիր: Եթէ ենթադրենք որ հերկելի խաւը 0.25 մէթր թանձրութիւն ունի, պիտի գտնենք որ մէկ «էքդար» հողը կուտայ 3—4,000 քիւօ «ազօդ», նոյնքան «ասիտ ֆօսֆօրիք», իբր 6—7000 քիւօ «բօդաս»: Արգասաւորիչ նիւթերու այս քանակութիւնք շատ աւելի են ու է բոյսի կամ տունկի պահանջած քանակութենէն:

Ինչպէս կ'ըլլայ ուրեմն որ հողերն աւելի մեծ արգասաւորութիւն մը չեն ունենար, քանի որ իրեն իրենց մէջ կը պարունակեն արգասաւորիչ նիւթերու այսքան մեծ քանակութիւններ: Պատճառը սա է թէ այդ նիւթերն, իրենց գտնուած բնական վիճակին մէջ, անմիջապէս իւրանալի, նոյնանալի չեն, այսինքն բոյսերը չեն կրնար մարսել զանոնք, և թէ ամէն տարի արգասաւորիչ գորութեան փոք

քանակութիւն մը միայն շրջաբերութեան մէջ կը դնեն, այսինքն այնչափ միայն որչափ որ բաւական է յառաջ բերելու ու է վայրի բոյս, բայց այդ քանակութիւնը չի կրնար սնուցանել սեզմ և կուռ հունձքեր:

Այս փոքրիկ քանակութիւն սակայն արհամարհելի չէ, այլ ամբողջանալու պէտք ունի: Արդ եթէ նոյնանալի, իւրանալի ձեւի մը տակ, հողին վերադարձնենք սնուցիչ հիւթերու քանակութիւն մը, հաւասար այն քանակութեան զոր նախորդ հունձքն առաւ անկէ, հողին արդասաւորութիւնն ո՛չ միայն անվթար պիտի պահուի, այլ և պիտի աճի աւելնայ, վասն զի արուեստական կերպով տրուած քանակութեան վրայ կուգայ կ'աւելնայ հողին ի բնէ տուած քանակութիւնն ար:

Մնաց որ, այս բանը գործնականապէս կրնայ ներկայանալ այն պարագային մէջ միայն երբ ի բնէ խոպան հող մը նոր հերկուած է, վասն զի այն հողերն որք երկար առնէ ի վեր կը մշակուին, միշտ իրենց մէջ ունին աղբի հետքեր:

Երբ պարարտութիւն մը, աղբ մը գործածել հարկ ըլլայ, պէտք է չորս բան ինկատ առնել.

1. Հողին արդասաւորութեան աստիճանը, այսինքն իր բնական աղբը:

2. Ազոդի, ասիտ ֆոսֆորիքի, բոգասի և կիրի կողմէ աղբին հարստութիւնը:

Եթէ հարկ ըլլայ աղբ մը գործածել երեք պատիկ աւելի ճոխ քան ուրիշ աղբ մը, կը բաւէ անկէ առնել փոքր քանակութիւն մը: Օրինակի համար, 800 քիլո կանճաղի (colza) կոպտոնի տեղ, որ 3 առ 100 ազոդ կը պարունակէ, կրնանք դնել 275 կրամ նիդրադ սոլ սուտ, որ 15 առ 100 ազոդ կը պարունակէ: Երկու պարագային մէջ ալ ազոդին քանակութիւնն է 40 քիլո:

3. Իւրանալի, նոյնանալի վիճակի հասնելու մասին աղբին ունեցած դիւրութիւնը:

Աղբը, օրինակի համար, կամաց կամաց կը տարրալուծուի, և առաջին տարին իր ազոդին գրեթէ միայն կէսը դուրս կուտայ, մինչդեռ բորակատներուն (nitrate) ազդեցութիւնը գրեթէ անմիջական է:

4. Պէտքերը կամ պահանջումներն այն բոյսին կամ տունկին զոր հողին կը յանձնենք:

Բոլոր բոյսերը պէտք ունին չորս տարր-

ներու, ազոդ, ասիտ ֆոսֆորիք, բոգաս, կիր: Բայց իրենց տեսակին համեմատ, աններեւ նախապատուութիւն մը ունին այս նիւթերէն: Եթէ կամ այնինչ մասին համար, Օրինակի համար, կանեփն առաւելապէս երկու տարրներու պէտք ունի, բոգասի և ազոդի. իսկ արմուիքները կը պահանջեն մանաւանդ ազոդ և ասիտ ֆոսֆորիք:

ԾԱՆՈԹ.— 1563ին, Պէրնար Բալիսի, զանազան աղբերու և երկրաչործութեան վրայ իր ունեցած մէկ երկասիրութեան մէջ կը գրէր. «Եթէ մէկը քանի մը տարի շարունակ արտ մը սերսանէ սուանց զայն աղբելու, սերմերն աճելու համար հողին աղբ պիտի քաշեն առնեն, և հողն այս կերպով պիտի զրկուի իր աղէն, և այլ ևս պիտի չկրնայ բան մը արտադրել: Հասարակ աղի մը վրայ չեմ խօսիր, այլ բուսական աղբերու վրայ: Եթէ աղբոուն յատկութիւնները գիտնայի, հրաշալի բաներ կրնայի ընել»:

1840ին, Լիէպիկ իր մէկ գործին մէջ կը գրէր. «Հողին արդասաւորութիւնը պահելու համար, պէտք է հտ տալ այն հանքային նիւթերը զորս հունձքերն առած են հողէն: Ու է բարւոք շահագործութեան մը օրէնքը կը կայանայ արդասաւորութեան հաւաստիչութիւնն անվթար պահպանելու մէջ, աղբերու միջոցաւ: Եթէ քիմիական տարրալուծմամբ որոշենք հանքային նիւթերու քանակութիւնն ու յատկութիւնը, զոր կ'արտածենք մսի, կաթի, ցորենի, ձեւին տակ և այլն, միւս կողմէ եթէ չափենք այն հանքային նիւթերը որք հողին կը վերադառնան աղբերուն միջոցաւ, շահագործութեան հաշուեկշիռը կրնանք կազմել, եթէ մեր հտ տուածէն աւելի կ'արտածենք, դէպի սպառում կը քաշենք»:

«Կենսադրական».— Պէրնար Բալիսի Ֆրանսայի հռչակաւոր բրուտաբան մ'է և իմաստաւէր մատենագիր մը: Իր բոլոր գրուածներուն մէջ, իր ժամանակի գիտութենէն շատ վեր կը բարձրանայ: Կը պատմուի թէ իր գեղեցիկ անօթները թրծելու համար, որք արուեստական նկարներով զարդարուած էին, առ ի չգոյժ վառեկանիւթի, իր կարասիներն այ-

րեր է: 1588ին ձերբակալուած և Պատիւի
բանալը նետուած է իբրեւ Հիւկիօ (կալվինա-
կան) և հոն մեռած է 1590ին, աւելի քան 80
տարեկան հասակի մէջ:

Լիէպիլի, հոչակաւոր Գերման քիմիագէտ,
ապրած է 1803էն մինչեւ 1873: Քիմիաբա-
նութեան վրայ հրատարակած է շատ մը
գործեր: Հնարած է նոր ուտեստներ, ար-
ուեստական կաթը, մսին հիւթը, քիմիական
հացը, արգանակի պնակիտները: 1871ին Միւ-
նիխի կաճառին տաջիւ իր արտասանած մէկ
բանախօսութեան մէջ բարձրաձայն հռչակեց
իր երախտագիտութիւնն առ Փրանսացի
գիտնականներն որք իր վարպետներն ու
բարեկամներն եղած էին:

ԱՂԲ ԵՒ ԿՈՅԱԶՈՒՐ

Պարարտութեանց ամենէն կարեւորն է
ագարակի աղբն, որ կը բաղկանայ ընտա-
նի անասուններուն կղկղանքէն, իբրեւ խշտիք
ծառայող բուսային նիւթերու հետ խառ-
նուած:

Աղբը փոսի մը մէջ կուտակուելով կը խը-
մորի, կամ մանաւանդ յամր կիզում մը կը կրէ,
որ բուսական փտահողի (terreau) կը վերածէ
զայն: Անասուններուն մէջն, որ կը թրջէ աղ-
բը, կը պարունակէ բնամէզը (urée), զոր փտու-
թիւնը կը վերածէ անուշադրի (նշատըր) բը-
նածխատի (carbonate d'ammoniaque): Սա ալ սնու-
ցիչ տարրները կը զատէ իրենց բաղադրու-
թիւնէն, այրելով գործարանական նիւթերը:

Կոյաջուրը (purin) այսինքն աղբերուն հեղուկ
մասը, անասնոց մէջին հետ խառնուե-
լով, աղբին ամենէն ազդու և գործօն մասը
կը դառնայ: Աղբին հետ միեւնոյն արգասա-
ւորիչ տարրները կը պարունակէ, բայց աւելի
մեծ քանակութեամբ: Կոյաջուրն երբ իր ծա-
ւալէն 5—6 պատիկ աւելի ջուրով խառնուի
և ուղղման գործածուի, հրաշալի արդիւնք-
ներ յառաջ կը բերէ:

Աղբին գործածութիւնը բազմաթիւ ա-
ռուելութիւններ կ'ընծայէ: Հողին հետ խառ-
նուելով, կը կակղցնէ, կը քրքրէ զայն, եթէ
հողը կաւային է: Ընդհակառակն թանձրու-
թիւն, սերտութիւն կուտայ անոր, եթէ հողն
աւազային է: Իր փտութեան արտադրոյթիւն-
րով նախեւ կընպաստէ բոյսերուն իւրանալի

կամ մարսելի ընելու հողին մէջ ի բնէ գըտ-
նուած հանքային մնուցիչ գոյացութիւնները:

Ուրեմն աղբն իր թէ՛ Փիղիքական և թէ՛ քի-
միական յատկութիւններով, ամէն լաւ մշա-
կութեան խարիսխն է: Հետեւապէս հողագոր-
ծը ամէն բանէ աւելի պարտի հող տանիլ իր
աղբին: Պէտք է որ անոր ո՛չ մէկ մասը կոր-
սնցնէ, և խնամով հաւաքէ տնասնոց մէջն որ
կոյաջուր շինելու պիտի ծառայէ: Այս նպա-
տակաւ, ախոռներուն ու գոմերուն գետինը
սալարկուած կ'ըլլայ կա՛մ քառակուսի քարե-
րով և կամ կուպրով, որպէս զի մէզը չծծէ՝
եթէ հողը ծծէ մէզը, մշակութեան համար
կորստեան և անասնոց համար ալ վատաւող-
ջութեան պատճառ մը պիտի ըլլայ միանգա-
մայն: Ասկէց զատ, ախոռներուն գետինը քիչ
մը զառ ի վայր ըլլալու է, այնպէս որ մէզը կա-
ւառէ մը (ջուրի ծակ) հոսի կոյաջուրի ջրամ,
բարին մէջ:

Աղբին փոսը պետք է որ մէջէն պատով
և կամ կաւի թանձր խաւով մը պատած ըլ-
լայ, որպէս զի կոյաջուրը հողէն ծծուելով չը
կորսուի: Փոսին մէկ ծայրը կը հաստատուի
կոյաջուրի ջրամբարն, ուր կը հոսէ մէզին ա-
ւելորդ մասը երբ չի ծծուիր աղբէն: Այս
ջրամբարին մէջ կը հաստատուի նաեւ ջրհան
մը, որ յաճախ աղբը ոռոգելու և խմորման
արտադրած ջերմութիւնը չափաւորելու պի-
տի ծառայէ: Փոսին մէջ աղբն ուժով մը կոխ-
կռտելով դիզելու է, այնպէս որ օղը ներս չը
թափանցէ: Եթէ այս զգուշութիւնն ի գործ
չգրուի, իր զանգուածին մէջ բորբոսներ
(մզլոտութիւն) յառաջ կուգան որք ուրիշ բան
չեն եթէ ոչ սոււնիկեր: Ասոնք աճելով, աղբէն
կը բառնան իր արգասաւորիչ տարրներուն
մէկ մասը: Այս կուտակում նաեւ կ'արգիլէ
գոլորշացումը կամ ցնդումը անուշադրին որ
իւր յատկութիւններէն մէկ մեծ մասը կուտայ
աղբին: Յարգ ըստածներէն դիւին է հաս-
կնալ որ, եթէ աղբն անձրեւի ջուրերն և
արեւուն ճառագայթներն ընդունելու են-
թարկուի, իր արգասաւորիչ զօրութեան մէկ
փոքր մասը միայն պիտի պահէ: Ուստի հո-
ղագործներէն ոմանք խողանէ կամ կղմնտրտ
տանիքով մը կը ծածկեն իրենց աղբանոցը: Շատ
մը գիւղերու մէջ սակայն մշակները դեռ չատ
հեռի են այսպիսի խնամքներէ և զգուշաւո-

րութիւններէ, եւ կը թողուն որ պարարտութեանց լաւագոյն մասը կորսուի:

Բարեք կառավարուած ագարակի մը մէջ ո'չ միայն ագարակին աղբը պէտք եղածին, պէս կը խնամեն, այլեւ բոլոր մնացորդ բաները, ինչպէս մոխիր, անասնոց բեկորներ, բուրդի կտորուանք, մարդկայինը կղկղանք մանաւանդ, մէկ խօսքով ինչ որ կը պարունակէ «ազօդ», «ասիտ ֆօսֆօրիք» կամ «բօդաս»), կը խառնեն աղբին հետ, անոր զօրութիւնն ու յատկութիւնն աւելցնելու համար:

Այդ քանակութիւնն, ինչ որ ալ ըլլայ միշտ պակաս է այն քանակութեանն զոր հունձքերը տարուէ տարի կ'առնեն հողէն: Հաշուած են թէ Ֆրանսայի մէջ ամէն տարի յոռաջ եկած 100 միլիոն տակառաչափ աղբը կրնայ հայթայթել միայն կէսն ա'յն արգասաւորիչ տարրներուն զորս մէկ տարուան հունձքը կը պարունակէ իր մէջ: Ի՞նչ եղած է միւս կէսը:

Ամենամեծ մասը արջաւաններէն իւրացուած եւ փոխուած է միսի, մորթի եւ այլն, եւ յետոյ արտածուած է. շուկային մէջ, կաթի, հաւկիթի եւ այլն ձեւին տակ. սպանդանոցին մէջ, միսի ձեւին տակ. գործարանին մէջ, բուրդի ձեւին տակ, եւ այլն եւ այլն: Մնացեալը, որ կը գտնուի հացին, ընդեղէններուն, պտուղներուն, ըմպելիներուն եւ այլնի մէջ, կը ծառայէ մանաւանդ մարդու անդեան:

Բայց արգասաւորիչ հիւթերուն այս ամբողջ երկրորդ կէսն այլեւ չի վերադառնար հողին, ողբալի ունակութեանց պատճառաւ. ինչպէս, օրինակի համար, քաղաքներուն մէջ ծովը կամ գետերը կը թափուին ահագին քանակութեամբ աղբ եւ պարտաւթիւն, որոց արժէքն ամէն տարի կը հասնի քանի մը միլիոն ֆրանքի եւ որք գետերը կը թունաւորեն, փոխանակ երթալ արգասաւորելու միլիոնաւոր արտավար հող: Այս տեսակէտով, ջինացիք մեզմէ շատ յոռաջ են, որք գիտեն հողին արգասաւորութիւնը պահել, անոր ետ տալով մարդոց եւ անասնոց բոլոր աւելցուքները:

Քանի որ Ֆրանսայի մէջ մշակութեան հարկ եղած աղբին կէսը միայն կ'արտադրուի, եւ միւս աղբերն ու պարարտութիւնները կը կորսուին, պէ՛տք է պակասը ընու-

ելթէ չուղուիր որ հողն աղքատանայ եւ իր արգասաւորութիւնը պակսի:

Այս գլխաւոր խնդրոյն լուծումը կը կայանայ աղբի յաւելուածական կամ լրացուցիչ պարարտութեան կիրառութեան մէջ: Երբ Ֆրանսացիք այսպէս կը մտածեն, մեք ի՞նչ ընելու ենք որ մշակութեան կողմէ դեռ նախնական տարերու մէջ կ'ապրինք:

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

ԵԹԵՐԸ.—ԱՆՀՈՒՆԻՆ ԳՈՅԱՑՈՒԹԻՒՆԸ

Իրաւ է թէ եթերը իր չափազանց նրբութեամբ անտեսանելի, անջօշափելի, անկշռելի հեղուկ մ'է, որ կը ընու անհունը եւ այս անհունին գոյացութիւնն իսկ կը ներկայացնէ, սակայն իր այս չափազանց նրբութենէն չեզրակացնենք թէ ոչինչ մ'է: Ամէն ինչ է եթերը: Թէեւ եթերը՝ Միջերկրականի բռնաշունչ հովին չի նմանիր, որ Մարտին մէջ գրեթէ կ'զգեստնէ գոշելով տանեաց վրայ՝ «թէ ինքը չէ», սակայն քան զայն ոչ հուազ ունի այժ մը հրաշալի որքան ահաւոր:

Իր ծոցին մէջն է որ ելեքտրականութիւնը կը յղանայ եւ շանթը կը գոռայ. ի՞նքն է որ աննշմարելի շարժմամբ մը կը փոխադրէ ոյսը, ջերմութիւնը ու հոտաւէտութիւնները: Արեգակնային աշխարհին մէջ վիտացող անթիւ, անհամար ատոմներն իրարու հետ յաւաքաբերութեան մէջ դնող միակ կապն է, եւ ատոմէ ատոմ կ'տանի այն խորհրդաւոր հոսանուտները (effluve)(*) որք կ'արգասաւորեն զա-

(*)ԵԱՆՕԹ.—Կ'արժէ այս բառին գիտական իմաստը քիչ մը լայն բացատրել: Ֆրանսերէն այս (effluve) բառը լատին (effluere) (հոսել) բայէն կը ծագի: Effluves անկշռելի, աննշմարելի հոսանուտներ են որ կը բղխին ամէն մարմիններէ, մանաւանդ կենդանական կամ բուսական գոյացութիւններէ, անոնց առողջ, տարաբաշխեալ կամ ասպականեալ վիճակներուն

նոնք: Միանդամայն ինքն է միջավայրը ուր ամէն ինչ կ'արտադրի, և ուր կը բղխի տիեզերքին կենսատու հեղուկը, տեսակ մը բան որ անհուն էակին մէջ կը կատարէ այն գերը, զոր կը կատարէ արիւնը մարդկային էակին մէջ, վերջապէս համառոտելու համար եթերին կարեւորութիւնը, կ'յաւելու Շառլը Ռիշար, եթէ աստուածաբանութիւնն հաճէր ինձ ներել՝ պիտի համարձակէի գերագոյն իմացականութեան մարմին մը տալ, Ըսելով թէ եթերը կերպով մը Աստուծոյ մարմինն ալ է:

Այսպիսի նրբութիւն ունցող հեղուկ մը որ այնքան հզօր զօրութեանց կեդրոնն է, կարելի չէ որ հանգիստ ու հանդարտ վիճակի մէջ լինի: Ուրեմն շարժումն անոր գոյութեան հետ ալ կապուած է: Բայց ի՞նչ պայմաններով և ի՞նչ կերպով:

Հեղուկ անսահմանութիւն մը՝ որ ամէն ուղղութեամբ, ամէն կողմ կ'յուզի, կ'յորդի, և որուն ամէն տարրները իրարու կ'ընդհարին, իրարու հետ կ'խառնուին, բաւական ժամանակէն վերջ՝ ու է առանցքի մը բոլորակը շրջապտոյտ ու ինք իր վրայ թաւալման ընդհանուր շարժում մ'առնելու համար հարկաւորապէս: Այս ճշմարտութիւնը բացատրելու համար հարկ չիկայ երկար բարակ բնազանցական խրթին ու մթին տեսութեանց մէջ առ խորիստի թափաւիլ և մինչեւ Արիստոտէլն

մէջ: Emanation «արտադրում» կը կոչուին երբ տարրալուծման երեւոյթ չունեցող մարմիններէ կ'արտադրին: Exhalaison արտաշնչումն կ'ըսուին՝ երբ շոգւոյ մը պէս զգալի՝ կը լինին աչքի Miasme ժահագոտութիւն՝ երբ վտանազւոր ու վնասակար ազդեցութիւն կը ներգործեն առողջութեան վրայ: Կենդանական թէ բուսական ամէն տեսակ կամ սեռ, ամէն անհատ ունի իր այս հոսանքները (effluve) իրեն յատուկ մասնաւոր հոտով մը, որ թէեւ յաճախ մարդկային հոտոտելեաց զգալի չլինիր, սակայն կենդանիք, նա մասնաւորապէս շունը շատ սուր կերպով կ'զգանա: Effluveները մեծ դեր կը խաղան տարաբնուիական տեսակ համաճարակներու առեւն: Կենդանական մաշնիսականութեան զարմանալի երեւոյթներն ալ մարդոց առ հասարակ անզգալի եղող այս

երեւելու ճգնիլ: Պարզ օրինակ մը աւելի կը բացատրէ:

Ձուր լեցուցէք կոնքի մը մէջ, պղտիկ գաւազանով մը ամէն կողմանէ ջուրը խառնելով անոր մէջ յառաջ բերէք անկարգ ուժեր: ջուրը ապա ինքնիրեն թողլով՝ պիտի տեսնէք թէ պահ մը ասղին անդին խռովեալ ծփծփալէն յետոյ՝ վերջապէս իր կեդրոնին շուրջը բոլորչի թաւալման շարժում մ'առնուլ պիտի սկսի: Այս միանական շարժումն ալ շատ դիւրին է հաստատել, երբ հեղուկն այլ ևս հանգարտած կ'երեւի, բնական է թուղթի կտոր մը հետեւ ջուրին երեսը: Ահա փորձ մը՝ որ ամէն քսակի և ամէն խելքի զիւրա մատչելի է: Է՛ ուրեմն, հիմայ մուքով լայնցուցէք, ընդարձակեցէք ձեր կոնքը՝ որչափ որ կ'ուզէք, և ջուրին տեղ լեցուցէք եթերը, փոխանակ վայրկեանի մը՝ յաւիտեանն առէ՛ք գործն աւելի դիւրացնելու համար, և ահա միեւնոյն արդիւնքն յառաջ պիտի գայ, միայն թէ աւելի՝ մեծ համեմատութեամբ: Արդէն շրջապտոյտ թաւալուն շարժումն (mouvement rotatoire) հեղուկ մարմիններուն այնքան բնական հանգամանքն է որ անոր պէս պէս օրինակներն ամէն մէկ քայլի կը պատահին մեզ, հոգմերու յուզան, զետերու յորդման ծովերու ալեծփուռներուն մէջ: Աշխարհիս մէջ ամէն բան արդէն կ'դառնայ, չ'զարմանանք ուրեմն, երբ կը տեսնենք այնքան գլուխներ որք իրենք ալ այնչափ կ'դառնան:

հոսանքներէն առաջ եկած կը համարին գիտունք: Կենդանական մագնիսականութիւնը (magnétisme animal) այն ճշմարիտ թէ ենթադրեալ ազդեցութիւնն է զոր մարդ մը ուրիշ մարդու վրայ կը ներգործէ շոշափումով մը: Եթէ հաւատ ընծայուի մագնիսականութեան առաքեալներուն, իբր թէ մագնիսացուած մէկը տեսակ մը լուսաւոր քնաչրջութեան կ'ենթարկուի, միտքդ եղածը կամ անցածը կը տեսնէ, կը կարդայ, կը տեսնէ, կը լսէ հեռունէրէն, բժշկութիւն չգտած հիւանդութեան բուն գեղը և անոր տեղը կը յայտնէ ևն: Եւն: Գերմանացի Մեսմեր տղթորը գտաւ կենդանական մագնիսականութիւնն որ հեղինակին անուամբ «Մեսմերաբանութիւն» ալ կը կոչուի:

Ուրեմն մենք Տիեզերքի ստեղծագործողութեան մէջ՝ իբրև նախնական, սկզբնական իրողութիւն պիտի ընդունինք եթեր կոչուած անկշռելի հեղուկ մը, որ շրջապտոյա թաւալուն շարժումով մը կ'դառնայ առանցքի մը շուրջը անցնելով անոր կեդրոնէն. և որովհետեւ զժուար է մոտածել անհունն՝ իր միակողմուր ամբողջութեամբը դարձող վիճակին մէջ, որովհետեւ յայնժամ անհուն արագութիւն մը պիտի բլլար՝ կեդրոնէն անհուն հեռաւորութեամբ մը զատուած, պիտի ընդունինք նաեւ, աւելի ճշդութեամբ համար, թէ այս ընդարձակածաւալ շարժումը համակեդրոն կամ կեդրոնակից գոտիներով (zones concentriques) կը կատարուի:

Առաջին գոտի մը — այս առաջին գոտին զառափարը մեզ ընծայողը թո՛ղ լինի մեր մոքով ջուրին տեղ եթեր լեցնելով ընդլայնուած կոնքը — իր շարժումը պիտի հաղորդէր նախ իրեն դրացի կամ մօտակայ գոտիի մը. այս գոտին ալ ուրիշ գոտիի մը, և այսպէս շարունակաբար իրարու ետեւէ, որչափ գոտիներ որ կրնաք երեւակայել, ամենքն ալ իրարու պիտի հաղորդէին շարժումը: Այս գոտիները պիտի դառնային նոյնպէս իրարմէ տարբեր արագութեամբ, բայց ամենքն ալ միեւնոյն առանցքին և միեւնոյն կեդրոնին շուրջը:

Վերացեալ գիտութեանց վարժապետք պիտի ըսեն հոս անշուշտ. անհունին մէկ կեդրոն տալն ի՞նչ ըսել է. այնքան տգէ՛տ ես որ չեմ գիտեր թէ անհունն ամէն տեղ ունի իր կեդրոնը: Ո՛չ երբեք: Անհունը կրնայ արդարեւ ամէն տեղ ունենալ կեդրոն մը, և ճիշդ ասոր համար է որ այդ կեդրոններէն մէկ հատն ալ կ'ունենայ տեղւոյ մը մէջ: Երբ դաւադանս կ'առնեմ պտտի երթալու, մեկնած տեղւոյս շուրջը անհունապա սիկ ուղղութեամբ ամէն կողմ ընթացք մը կը բռնեմ, ասոր համար կ'ըսելի՞մ է հետեւցնել թէ այդքան ուղղութեամբ ընթացքներէն ոչ մէկին հետեւած չեմ ըլլար:

Եթերն այսպէս ըրած է միջոցի անհունին և ժամանակի յաւիտեանին մէջ: Ճանչնանք և ընդունինք ուրեմն, առանց տարակուսելու առանցք մը՝ որուն շուրջը կը դառնայ եթերը: Եթեմք տալուին տեղի հեռուն, ճշմարտութիւնը լաւագոյն եւս ըմբռնելու համար, ճանչնանք և ընդունինք թէ այս առանցքը ունի նաեւ մասնաւոր կեդրոն մը, որ պիտի լինի

տիեզերքի մէջ կեցած ամէն բաներուն կեդրոնը: Եւ, եթէ աստուածաբանութիւնը կը հաճի նորէն ներել մեզ, զնեհը այս կէտին ու կեդրոնին մէջ խորհրդաւոր վեհարանն այն Դեռագոյն Խնայակալութեան սրանտի կը կառավարէ անհունը և կը վարչապետէ տիեզերքին:

Թէպէտեւ այս Վեհապետ ուղեբազոյն գորութիւնն ամէն տեղ գործէ ու ներգործէ, այս սոս ամենայնիւ ընդունուած է թէ ունի գործելու, աղբիւր մասնաւոր իշխանաւայր մը տիեզերքի կեդրոնին մէջն ալ, ինչպէս ունի ասկէ առաջ, ասհման սուր աստիճանով մը՝ արեգակներուն, մոլորակներուն մէջ, մէկ խօսքով, այն ամէն կեդրոններուն մէջ, ուր կ'աճի, կը բարգաւաճի Կենանքն իր երեւոյթներուն բոլոր հետեւորդներովն:

Գիտական կամ իմաստասիրական սոյն վարդապետութեան մէջ չկայ բացատրութիւն մը, բան մը՝ որ նմանի ո՛ր և է տեսակ համաստուածութեան մը, և իրաց վարէ, վտարէ Աստուածն անձնաւորութեան այն մխիթարիչ դաժափարէն, զոր մարդկային միտքը, ինչ ալ անոր նկատմամբ ըսած կամ բարբանջած լինի Ոլնան, միշտ պէտք ունի և կարօտ է տածելու, գտնելու իր Արարչին մէջ, որ անշուշտ ինքն է առաջին, հարկաւոր ու տիեզերական պատճառն ամենայնի որ կան ու կը չնչեն. ինքն լինելու է անշուշտ որ գոյացուցած է եթերը և տուած է անոր բացարձակ, կամենալարող ոյժն ու օրէնքները, որով ստեղծագործութեան «այրէն գիմն» ու «մէկ երկուք երեք» սկսի. ինչպէս ինքն է ցարդ և գուցէ ցիսպառ մարդկային մտքին ամենէն յաջողագոյն ու ծայրագոյն խողարկութեանց առջեւ վերել յիշուած ու անհունին վրայնայող կամ գոցուող «Պղնձէ Դուռ»ը կը պողն ու բանային ինքն առնելով անոր ետեւ քաշուած նստուկ անթափանցելի, անհասանելի և անճառելի Գ. Ն կամ X. ը:

(Շարունակելի)

ԲԱՆԱԲԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄ

Բարիդէ կը հեռագրեն Յով. 2 թը-
ւով:—«Լէտիսմիթի օգնութեան գացող
Զօր. Պուլլըրի շարժումներուն յաջողու-
թիւնը կասկածելի կը ցուցնեն Ֆրանսա-
կան թերթեր: Ի՞նչէն հեռագրիւր
կը ծանուցանեն թէ բրիտանական
զինուորք աստիճանաբար և ապահո-
վաբար կը յառաջանան Պօէրներն
իրենց առջեւէն քշելով, շատ մը թեր-
թեր կը պնդեն թէ Իլէտիսմիթ հասնե-
լու փորձն ապարդիւն պիտի ըլլայ՝ ինչ-
պէս եղաւ Լորա Միթուէնի փորձը Բիմ-
պրլին աղատելու համար: Միեւնոյն ա-
տեն պատերազմին վերջնական արդիւնք-
ներուն վրայ զանազան զրոյցներ կը պտը-
տին: Լա Բադուի կը պնդէ թէ Ֆրանսա-
կան կառավարութիւնն իմանալով որ
սնդը նախարարութեան նպատակն է
հարաւ Ասիոյի կեանքը դործածել
Մատակաւարի դէմ, Թրանսպայի հետ
հաշտութիւն կնքելէ անմիջապէս ետքը
որոշեց իր այս տեղի բանակը շատցնել
Հինգ հազար հետեւակ պիտի ղրկուին
անմիջապէս Ի Տիէկօ Սուարէզ հրամա-
տարութեամբ գնդ. Ժօֆուի Սակայն
գնդ. Ժօֆու հոն կը ղրկուի Ֆրանսական
գաղթականութեանց ծովեզերեայ պաշտ-
պանութեանց ծրագրին համաձայն: Տիէ-
կօ Սուարէզի զօրաց հրամատարութիւնը
գնդ. Ժօֆուի յանձնուիլը Ֆրանսայի և
Անգլիոյ միջեւ յարաբերութեանց պաշու-
թիւն չի ցուցներ: Ֆրանսա կ'ամրացնէ
զՏիէկօ Սուարէզ իր ծովային և գաղթա-
յին շահերն ապահովելու համար Հնդ-
կաց Ովկիանոսին մէջ: Տիէկօ Սուարէզ
ծովածոցին պաշտպանութեան համար 12
միլիոն ֆր. վարկ մը պիտի խնդրուի Ե-
րեսի. Ժողովէն:

«Ֆրանսացի քաղաքագէտ մը յօդուած
մը հրատարակելով կ'ըսէ թէ Ֆրանսա,
Գերմանիա և Ռուսիա որոշած են ներկայ
առիթէն օգուտ քաղել բռնադատելու
համար զԱնգլիա որ իրենց միջեւ զանա-
զան առկա խնդիրները կարգադրէ:
Կ'ըսուի թէ Ֆրանսայի արտաքին դործոց
նախարար Տէլքասէ լիուրի հրահանգ ղր-
կած է Լոնտոնի դեսպան Քանպոնի խօ-
սակցութեան մասնելու Լորա Սալզպըրիի
հետ Ֆրանսան շահագրգռող խնդիրնե-
րուն վրայ: Ֆրանսական դեսպանն ըստ
այսմ պիտի պնդէ եղբոր որ կարգադրը-
ւին Նիւֆաուտէնտի դժուարութիւնը,
Սիամի Մէնամ հովտին խնդիրը, Մարօքի
խնդիրը, Մատակաւարի խնդրոյն վերջ-
նական ելքը, Նեղոսի Հովտին խնդիրը,
և Նոր. Հէպրիտեան կղզիներն ալ Ֆրան-
սայի յանձնուին: Այս յայտարարութիւնը
սակայն հիմնաւոր չեն նկատուիր: Ֆրան-
սա քանիցս յայտարարած է թէ Նեղոսի
Հովտին խնդիրը եւրոպական խնդիր մէ,
և չի կարծուիր որ այս պահուի եւրո-
պայի պետութիւնք միանան ստիպելու
համար զՄեծն Բրիտանիա որ Նեղոսի
խնդիրը միանգամ ընդ միշտ կարգա-
դրուի»

* *

Պերլինէ ևս կը հեռագրուի նոյն թը-
ւով:—«Այսօր Սակարանին մէջ զրոյց ե-
լաւ թէ Վիլհէլմ կայսր Բրուսիոյ երեսփ-
փոյն Նախագահներն ընդունած պա-
հուն անհատական խնդիրներու վրայ
միայն չէ խօսած, այլ պատերազմին ալ
աւնարկեր է: Կ'ըսուի թէ Ն. Վեհափա-
ռութիւն նախ և առաջ տնտեսական նիւ-
թերու վրայ խօսեր է, զոր օրինակ, ելք-
տրական շարժիչ կարողութեան, օգտա-
կարութեան վրայ երկրագործութեան
համար: Յետոյ խօսակցութիւնը հարաւ
Ափրիկէի պատերազմին վրայ դարձնելով
գովեր է Պօէրներուն յաջողակ ռազմա-
գիտութիւնը, որք առանց սուրի և սուի-

նի միմիայն իրենց հրապարակներուն վստահացած են, և զարմանալի ճշտութեամբ կը գործածեն զանոնք: Միեւնոյն ատեն ի սրտէ ցաւ յայտներ է որ այնքան անգլիացի սպաներ ինկան, և անգլիական առաջնակարգ ընտանիքներ խորին սուգի մէջ թաղուեցան: Ի վերջոյ հայտը ցաւ յայտներ է թրանսվալեան խնդրոյն առթիւ Գերման մամոյն մէկ մասին բռնած ընթացքին համար, որ շատ փափուկ պարագայի մէջ կը դնէ ն. վեհափառութեան Անգլիոյ հետ ունեցած յարաբերութիւնները, Յիշեցուց Պիզմարքի խօսքը թէ — Մեր մամոյն կոտորած ապակիներունստակը մենք կը վճարենք»:

* *

Վիեննայէ ևս կը հեռագրեն — «Նախ երբեք զինակցութեան և ապա գրեթէ բոլոր եւրոպայի դահլիճներուն միջեւ բանակցութիւնք կատարուեցան թէ ինչ միջոցներով պէտք է կարգթիւր պատերազմական մագսանենդութեան խնդիրները, ծովու վրայ խուզարկութեան իրաւունքը, և ինչ բանակցութիւնք սկսեր են 15 օր առաջ, այսինքն Գերման Պուշտաթ շոգենաւին վար դրուելէն անմիջապէս ետք: Բայց Դեսպանատնիւրհոյ մը գումարումն անյարմար տեսնուելէ ց Գանի որ պատերազմը կը շարունակուի որովհետեւ պիտի կարծուի թէ առաջին քայլ մ'է այս դէպ ի միջամտութիւն, որ ունէ պետութիւն մը միտքէն չանցնիր: Ասկէց զատ պատերազմը կրնայ ծնունդ տալ դեռ ծովու վրայ անակնկալ միջադէպներու: Ուրիշ խնդիր մ'է թէ պատերազմէն ետք Դեսպանատնիւրհոյ պիտի դումարուի»:

ՏԵՍ. ԵՒ ԳՈՐԾ. ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵՁՈՒԻ

Յօրիցեց՝ ԲԻԻԶԱՆԴ Մ. ՊՕԶԱՃԵԱՆ

«Տարրական ընթացք».— 80 երեսէ բաղկացեալ կը պարունակէ 51 ընթերցուած և 212 հրահանգ, մին քան զմիւսն չահեկան, Գին 2 դրուչ:

«Միջին և Բարձ. ընթացք».— 208 երեսէ բաղկացեալ կը պարունակէ 50 ընթերցուած, լաւագոյն հեղինակներէ քաղուած և 200 հրահանգ, Գին 4 դրուչ:

Սոյն երկու Բերականութիւններն իրենց տեսակին մէջ լաւագոյններն են, և հետեւապէս ջերմապէս կը յանձնարարենք Հայերէնի ուսուցիչներուն ուղարկութեան:

Ազգ. վարժարաններուն համար 25 առ հարիւր զեղջ:

ՄԵՃԵԼԼԷ

ՕՍՄ. ՔԱՂ. ՕՐԻՆԱԳԻՐՔ

Սոյն օրինագրքին հայերէն թարգմանութիւնն և թուրքերէն արտատպութիւնը դէմ առ դէմ հրատարակուած են, հինգ հատորներու մէջ ամփոփուած: Իւրաքանչիւր հատորի գինն է 10 դրուչ: 5 հատորն ի միասին առնել ուղարկին համար 40 դրուչ: Կը ծախուի բոլոր գրավաճառներուն քով: Գաւառներէն եթէ 45 դրչի փոսթայի բով դրկուի Հանրագիտակ» Տնօրէնութեան, փոսթայով կը դրկուի յանձնարարեալ ծրարով:

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՎԱՋԱՌԱՏՈՒՆ

Կ. ՓԻՇԹՕՖՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Մասնագիր

11 Գաղափար, Փափաղ փողոց 11

Վաճառատունն սլաքի ունի ծանուցանել Սկիւտարի և Գաղափարի յարկոյ ազգայնոց թէ կազանդի առթիւ ընտրանօք բերել տուած է ճաշակաւոր կազանդէքներ և զանազան առարկաներ :

Սոյն վաճառատան մէջ պատրաստ կան նաեւ քովէն տեսակ դըպրոցական պիտոյք, ձեռագործի տերեւ, ամէն տեսակ թուղթ, թէյ, պաքսիմադ, չոքոլա, հարսանեկան շաքար ևլն :

Գաւառներէն մեծ յանձնարարութիւնք կը կատարուին փութով և ճշտութեամբ : ՀԱՍՑԷ. Կ. Փիշթօֆճեան, կալաթա, Տէրիմէն խան :



ԱԶՆԻՒ ԸՆԹԵՐՑՈՂ

Կ'ուղե՞ս հեշտիւ խմել

անխառն իւղ Մօռիւ Զկան

ՀԱՃԷ՛ ԴԻՆՆԵԼ

Կէտիք—Փաշա Պաշի

“ՍՈՒԼԹԱՆԻՆ” ծանօթ Գեղարան

Զոր կը վարէ Լ. Կիւմիշեան

ՁԳ

ԿՍՐԹԻՈՐ ԱԶԴ.—Հանրագիտակի կողքին նրեք էջերը ծանուցմանց յատկացուած են: Ոնենք որ կը հաճին մէկ տարեկան բաժանորդագրուիլ կրնան իրենց ծանուցումները ԶՐԻ հրատարակել տալ 10ական տուր 5 անգամուան համար: Իսկ 05 տուր մէկ անգամուան համար:

Բաժանորդագրութիւնք կ'ընդունուին, եռամսեայ, վեցամսեայ և տարեկան:

ՏԱՐՐԱԿԱՆ ԹՈՒԱՐԱՆՈՒԹԻՒՆ

ՄՏԱՒՈՐ ԵՒ ԳՐԱՒՈՐ

Ա. Է. Բ. Տարի

Յօրինեց Գ. Գալաֆեան

Գ. անգամ տպագրուեցաւ կարեւոր յաւելումներով: Իբրեւ թուաբանութիւն, իր տեսակին մէջ գերազանց է իր սէթոտով, իր պարունակած՝ գործնական խնդիրներով, եւ շահեկան պիտելիքներով, յատկապէս Արթական ծրագրին համաձայն յօրինուած՝ տարրական Գաղափարացիներու համար: Կը յանձնարարենք բոլոր թուաբաններու ուշադրութեան: Գին 4ուկէս դրշ. — Կեդրոնատեղի Պալենց Գրատուն:

ՄԵՐ ՀԱՍՑԷՆ

“Հանրագիտակ,,ի վերաբերեալ առեկ գրութիւն պետք է ուղղել “Ծաղիկ,,ի Տպարանը, առ Տնօրէնութիւն “Հանրագիտակ,,ի: